ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԿԼԻՄԱ

Հայաստանում շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության ոլորտներում ԵՄ աջակցությամբ իրականացվող նախաձեռնություններն ուղղված են կայուն զարգացման խթանմանը՝ միաժամանակ բնական ռեսուրսների և կենսաբազմազանության պահպանման, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության բարձրացման, ջրային և ոռոգման ենթակառուցվածքների հասանելիության բարելավման, ինչպես նաև տնտեսական և կանաչ աճի աջակցման միջոցով:

Այս ջանքերը նպաստում են Հայաստանի՝ ԵՄ շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության քաղաքականությունների ու չափանիշների հետ համապատասխանեցմանը՝ ՀԸԳՀ-ի (Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր) շրջանակում:

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՋՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- «ԵՄ-ն Սևանի համար+» ծրագիր
- Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր
- Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր
- «ԵՄ-ն հանուն կանաչ վերականգնման ԱԼԳ երկրներում» ծրագիր

ՕԴԻ ՈՐԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

- «ԵՄ-ն հանուն կանաչ վերականգնման ԱԼԳ երկրներում» ծրագիր
- «Մաքուր օդ՝ հանուն առողջության և կանաչ աճի Հայաստանում» ծրագիր

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱ

- «Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման» ծրագիր
- «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք»
- «Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերությունը»

ՋՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԵՄ-ն աջակցում է Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանը՝ ապահովելով անվտանգ և բարձրորակ խմելու ջրի հասանելիություն, ջրամատակարարման ու կեղտաջրերի համակարգերի արդիականացում:

Աջակցությունը ներառում է ենթակառուցվածքային ներդրումներ, կարողությունների զարգացում և քաղաքական բարեփոխումներ շրջակա միջավայրի ԵՄ չափանիշներին համապատասխան, նաև համակցված ֆինանսավորում միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցությամբ:

«ԵՄ-ն Սևանի համար+» ծրագիր
Կայուն ջրային կառավարման միջոցով աջակցում է համայնքային դիմակայունության զարգացմանը Հայաստանում՝ բարելավելով Սևանա լճի շրջակայքում կեղտաջրերի մաքրման համակարգերը և բարձրացնելով հարակից համայնքների՝ Գավառի, Վարդենիսի և Մարտունու կլիմայական դիմակայունությունը:

Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր
Աջակցում է Երևանի ջրամատակարարման ցանցի վերականգնմանը՝ ապահովելով ավելի արդյունավետ և հուսալի ծառայություններ:

Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր
Ապահովում է բարձրորակ խմելու ջրի շարունակական մատակարարման հասանելիություն և կեղտաջրերի կանոնակարգված հեռացում Գյումրիի, Վանաձորի և Արմավիրի բնակչության համար:

«ԵՄ-ն հանուն կանաչ վերականգնման ԱլԳ երկրներում» ծրագիր
Աջակցում է ջրային ռեսուրսների պաշտպանությանը և աղտոտման նվազեցմանը՝ ջրի որակի բարելավման միջոցով՝ առավել արդյունավետ կառավարման և մշտադիտարկման շնորհիվ՝ նպատակ ունենալով պաշտպանել հանրային առողջությունը և էկոհամակարգերը:

ՕԴԻ ՈՐԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԵՄ-ն աջակցում է Հայաստանում օդի որակի բարելավմանը՝ ուժեղացնելով մշտադիտարկման, գնահատման և կառավարման համակարգերը՝ մասնավորապես արդյունաբերական արտանետումների ոլորտում, նաև առաջ մղելով մաքուր օդի քաղաքականություններ՝ ԵՄ չափանիշներին և ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիային համապատասխան:

Աջակցությունը ներառում է իրավական դաշտի ամրապնդում, կարողությունների զարգացում, մշտադիտարկման համակարգերի արդիականացում, նաև օդի որակի տվյալների ավելի լայն օգտագործման խթանում՝ թե՛ պետական կառույցների, թե՛ հանրության կողմից:

«ԵՄ-ն հանուն կանաչ վերականգնման ԱլԳ երկրներում» ծրագիր
Աջակցում է Արևելյան գործընկերության երկրներին շրջակա միջավայրի կառավարման ամրապնդման և օդի որակի բարելավման գործում՝ ԵՄ բնապահպանական ստանդարտների հետ ավելի սերտ համապատասխանեցման, տվյալների հավաքագրման և փոխանակման համակարգերի կատարելագործման, նաև տարածաշրջանային համագործակցության միջոցով՝ աղտոտվածության նվազեցման և կայուն զարգացման խթանման նպատակով:

«Մաքուր օդ՝ հանուն առողջության և կանաչ աճի Հայաստանում» ծրագիր
Նպաստում է Հայաստանում օդի որակի բարելավմանը՝ ուժեղացնելով օդի մշտադիտարկման, գնահատման և կառավարման համակարգերը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով արդյունաբերական արտանետումների նվազեցմանը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է ապահովել օդի որակի ավտոմատ 2 կայան և ազգային ռեֆերենս լաբորատորիա:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱ

ԵՄ-ն աջակցում է Հայաստանում կլիմայի պաշտպանությանը՝ խթանելով վերականգնվող էներգիայի օգտագործումն ու էներգաարդյունավետության զարգացումը: Սա ներառում է կայուն էներգետիկ լուծումների հասանելիության բարելավումը, էներգետիկ աղքատության նվազեցումը և էներգետիկ անվտանգության և անկախության ամրապնդումը:

Աջակցությունը նաև նպաստում է համայնքներին՝ բարելավելու հանրային ծառայությունները և զարգացնելու կարողությունները՝ տեղական մակարդակում կլիմայական և էներգետիկ գործողություններ իրականացնելու համար:

«Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման» ծրագիր
Ծրագիրը ամրապնդում է Հայաստանի գյուղական համայնքների կլիմայական դիմակայունությունը՝ վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության ներուժի օգտագործման միջոցով: Այն նպատակ ունի նվազեցնել էներգետիկ աղքատությունը և բարձրացնել էներգետիկ անվտանգությունը Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում:

«Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք»
Աջակցում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կամավոր կերպով միանալու և իրականացնելու Եվրոպական միության կլիմայական և էներգետիկ նպատակները: Այն խթանում է բազմաշահառու միջազգային շարժմանը՝ տրամադրելով տեխնիկական և մեթոդական աջակցություն տարածաշրջանային իշխանություններին:

«Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերությունը»
Նպատակ ունի հասնել զգալի էներգախնայողության և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման համայնքային ոլորտներում, ինչպիսիք են կենտրոնացված ջեռուցումը, փողոցային լուսավորությունը և հանրային տրանսպորտը: